


THE DICKRIS PUBLISHING CO. 628 Third Avenue, NEW YORK CITY.



ՏԻԳՐԻՍԻ ՍԻՆՆԱԿՆԵՐԸ ԲԱԾ ԵՆ ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ ԱՌՋԵՆԻ:

ՇԱՐԱԹՍԹԵՐԹ

ԱՂԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Ս. ՏԱՐԻ, ԹԻՒ 25

ՆԻՒ ԵՈՐԲ, ՇԱՐԱԹ, ԱՊՐԻԼ 30, 1898

ԳԻՆ 3 ՍԷՆԹ

ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹԻՒՆԸ

Ազատ և երջանիկ է Բիւլան... Գերի և ապերջանիկ է Հայաստանը...

Քիւլագի է ի դատ և ոչ մէկ ազգայնաբան կը հրճուի, իր բոլոր վիշտերուն մէջ...

Մի՛ ըսէք թէ Բիւլան տակաւին պաշտօնական կերպով ազատուած չէ...

Բիւլան ստեղծելու համար «Եղիցի» մը պէտք էր, Ստեղծողի մը կտրուկ հրամանը: Ովկիանոսի անձանոթութեան և անհունութեան մէջէն...

Ոչ Ընքը Սամի հօգու նաւատարմիդները և ո՛չ ալ անոր անթիւ գինըրներն են Բիւլայի իսկական ազատիչները:

Ամեն ազգեր ազատուած են և ամեն ազգեր պիտի ազատուին իրենց երիտասարդութեան ու ժեղ բազուկներով...

Ազատ է Բիւլան, որովհետև Հայրենասէր և անձնուէր երիտասարդութիւն մը ունեցաւ: Կազատուի Հայաստան ալ, որովհետև իր ծոցը ունի, թէև բազումամբ Բիւլայի բաւական տկար, ազգասէր և անձնուրաց երիտասարդութիւն մը:

ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Ապրիլ 24,

—Ուրբաթ առաւօտ ժամը 6 ին, պատերազմը հրատարակուելէն մէկ ժամ վերջ, Հիւսիսային Առլանտեանի Նաւատորմը Գի Ուէսթէ ճամբայ ելաւ դէպի Հաւանայ: Սպանիական Պիւէնա վէնիթուրա անուն վաճառական կանոնադրու էրը հանդիպեցաւ ասոնց, բարեւեց՝ ըստ օրինի՝ ասոնց գիտնալու թէ թշնամութիւնն սկսած էր երկու ազգաց մէջ: Նաշուիլ զբահանաւը երկու անգամ կը բահելէ վերջ՝ գերի բռնեց սպան. նաւը ու Գի Ուէսթէ բերաւ:

—Նոյն օրը Նիւ Եօրք դրօշակաւաւ գերի բռնեց Սպան. Փէտրօ շոգենաւը որ Հաւանայի նաւահանգրտէն նոր ճամբայ ելած էր Սանթիակո Տը Բիւլան երթալու:

—Էրիթրէի փոքր զբահանաւը, որ նոյն նաւատորմիդին կը վերաբերի, երրորդ գերի մը բռնեց՝ Սպանիական ձկնորս առագաստնաւ մը: Գերի բռնուող նաւերը Գի Ուէսթէ բերուեցան: Պատերազմական օրինաց համեմատ, այս նաւերը, ինչպէս նաև իրենց բեռներն պիտի վաճառուին, որոնցմէ գոյացած դրամի կէսը պիտի վերաբերի Կառավարութեան, իսկ միւս կէսը պիտի բաժնուի գերի բռնող զբահանաւերու պաշտօնականներուն և նաւատարմներուն մէջ տեղ:

—Նախագահը 125 հազար կամաւոր զէնքի տակ կանչեց, Բոնկրէսի հաւանութեամբ:

—Փարիզ շոգենաւը, որ անցեալ օր ճամբայ ելաւ Սաութհամթընէն Նիւ Եօրք գալու եւ նաւատորմիդին միանալու համար, կը վախճուի թէ բռնուած է Սպանիական զբահանաւերէ: Փարիզ, որ ե՛լլ անուըր առած է այժմ, իր տէրերը կըսեն թէ, պիտի յաջողի անվտանգ հոս հասնիլ: Վասնիկ Սպանիական զբահանաւերու տմենէն արագն անգամ իրմէ երկու մղոն պակաս ճամբայ կառնէ ամեն ժամ: Մովային Նախարարը երկու զբահանաւերները զրկեց՝ Փարիզը անվտանգ հոս բերելու համար:

—Ովկիանոսին վրայ այժմ 54 նաւեր կան Ընքը Սամի զբահանաւերներէն գերի բռնուելու վտանգին ենթարկեալ:

—Շէնանուօս առագաստանաւը կը սուր թէ գերի բռնուած է Սպանիացիներէն, Բրիտանական եզերքին մօտերը:

—Սէնթ Լուի մեծ շոգենաւը Նիւ Եօրք հասաւ անվտանգ: Իր բեռները պարպելէ վերջ Ֆիլատելֆիայ պիտի երթայ զբահանաւորուելու համար:

—Գաղղիական և Գերմանական լրագիրները խիստ կերպով կը քննադատեն Ուաշինթընի Կառավարութիւնն ու անոր ընթացքը:

—Պէնսիլանիայի հեռագիր մը կը ծանուցանէ թէ Սպանիական նաւատորմիդը փոխանակ Բիւլան երթալու, ուղղակի Նիւ Եօրքը ուժրակոծելու պիտի գայ:

—Գաղղիական մէջ անցեալ Շարաթ օր 10.000 հոգի կամաւոր գրուեցան:

—Գերմանիա, Գաղղիա, Աւեստրիա և Իտալիա Ուաշինթընի և Մատրիտի Կառավարութեանց դիմելով՝ զգուշացուցած են իրենց դրօշակը կողմնաւորուելու դպելէ, հակառակ պարագային ծանր փոխարինութիւններ պահանջելու սպառնալիքով:

—Հօլանտ ընդ ծովեայ նաւը Բիւլան կերթայ Ընքը Սամի նաւատորմիդին միանալու համար:

—Բիւլայի գլխաւոր նաւահանգիստները պաշարուած են Նահանգաց նաւատորմիդէն: Մովային Նախարարութիւնը բոլոր վաճառականական նաւատէրերուն ծանուցանեց զայս:

—Ուաշինթընէն կը հեռագրեն թէ Կառավարութիւնը Հայվայի կըզգինները գրաւած է եղեր ամսոյս 15ին: Հայվայ պիտի ծառայէ իրր անուրի և պաշարի կայարան:

—Կանոնաւոր բանակէն մաս մը Պրաքլինի նաւարանէն Փանթլըր նաւով ճամբայ ելաւ Բիւլան երթալու համար:

—Երկու մեծ շոգենաւեր գնուեցան, որք զբահանաւորուելով ծովեզը պաշտպանող նաւատորմիդին պիտի միանան:

25

—Մաթանգայի ամրոցներէն ու Մօրօի բերդէն Սպանիացիք կրակը բրին ամերիկեան նաւատորմիդին վրայ՝ առանց վնաս մը կրնալ հասցնելու:

—Բիւլայի ծովեզրին մօտ անտառները կրակ առած կը վառուին:

—Ամերիկայի Պալմ Ովկիանոսի նաւատորմիդը Հօնկ Գօնկէն ճամբայ ելած է, կըսուի թէ Ֆիլիպին կըզգինները երթալու ու զայնս զբաւելու համար: Սպանիական զօրաւոր նաւատորմիդը, որ նոյն կըզգիններու առջև կեցած է այժմ, կուրի պիտի բռնուի ծովակալ Տուիի նաւախմբին հետ:

—Կարմիր Պալմ ընկերութեան դրօշին տակ պաշար պիտի զրկուի Բիւլան: Եթէ Սպանիացիք այդ դրօշը չէզոք չի ճանչնան՝ ծովակալ Սամսըն պիտի սկսի ուժրակոծել Սպանիական բերդերը:

—Մինչև այսօր Ամերիկայի գերի բռնած Սպանիական շոգենաւերու ու անոնց բեռներու գինն 3 միլիօն տօլարի կը հասնի:

—Տասը հազար կըթեալ ազաւնիներ կը տրուին Ամերիկեան նաւատորմիդներուն: Ասոնք պաշտօն պիտի ունենան լուր բերելու շարունակ անհամբեր կառավարութեան ու ժողովրդեան:

—Համպուրկ Լայն ընկերութեան հսկայ շոգենաւերներէն երկուքը գնուեցան Ուաշինթընի Կառավարութեան կողմէ:

—Յատուկ մարտանաւ մը զրկուեցաւ Ամերիկեան Կառավարութեան կողմէ՝ Բիւլան գուրսի աշխարհին հետ կապող բոլոր հեռագրական ընդ ծովեայ թելերը կտրելու համար:

—Չրոյց կայ թէ Սպանիա Բիւլան ծախած է Աւեստրիայ:

—Չիւնորական օրէնքի տակ է Բիւլան կըզգին:

Սպանիական երկու մեծ շոգենաւեր, Գաթալինա և Սաթուրա, գերի բռնուեցան: Վերջի հեռագիր մը ուրիշ երկու Սպանիական շոգենաւերու ալ գերի իյնալը կը ծանուցանէ:

26

—Ուաշինթընի Սպանիական զեւպանը Բանատայ հաստատուած է այժմ. և անկէ լրտեսներ կը զրկէ այս կողմերը ու ասոնցմէ ստացած լուրերը կը հաղորդէ իր Կառավարութեան: Ուաշինթընի Կառավարութիւնը այս մասին բողոքեց Բրիտանական Կառավարութեան և պահանջեց որ զեւպանն ու իր արքանեակները Բանատայէ դուրս հանուին:

—Կըսուի թէ Սպանիացիք երկու մարտանաւեր պիտի զրկեն՝ Գլօնտայքէն ոսկի բերող ամերիկեան շոգենաւերը բռնելու համար: Նուային գործոց նախարար Լօնկի դիմում եղած է այդ հաւանականութեանց առաջըն առնելու համար:

—Փորթուգալի Կառավարութիւնը, որոյ կը վերաբերի Բէյի Տը Վէյը կըզգինները, Ուաշինթընի Կառավարութեանէն ստացած ծանուցագրի մը վրայ, 48 ժամ ժամանակ ստուաւ Սպանիոյ իր նաւատորմիդը յեռեալ կըզգիններէ հեռացնելու համար:

—Եւրոպական մեծ տէրութիւնք, Ուաշինթընէն պաշտօնական ծանուցագրի մը պատասխանելով, ըսած են թէ պատերազմի ժամանակ չէզոք պիտի մնան:

—Մերակոյտի բոլոր անդամները խնդրագիր մը ստորագրեցին, որով կը խնդրեն Նախագահէն որ ազատ արձակէ գլխաւոր շարթ, որ երկու տարուան բանտարկութեան դատապարտուած էր քանի մը ամիսներ առաջ Բիւլայի յեղափոխականներուն օգնութիւն տանելուն համար: Կըսուի թէ Գաթալինէն ներողութեան պիտի արժանանայ:

—Հակառակ եկած լուրերուն, Սպանիական նաւատորմիդը դեռ Բէյի վէրտէ ճամբայ չէ ելած:

—Մեծն Բրիտանիա պաշտօնապէս ծանուց որ պատերազմող Տէրութեանց զբահանաւորներն 24 ժամ մէջ անգլիական նաւահանգիստներէ անպատճառ դուրս ելնելու են:

(Շարունակութիւն երրորդ երես)

Մ Ե Մ Հ Ա Ն Դ Ե Ս

Երիտասարդաց Բրիտանական Ընկերութեան Սրահին մէջ (23րդ փողոց, 4րդ աստի) Ապրիլ 30, Շարաթ երկու ժամը 7 1/2 ին: Ամեն Հայ կը հրաւիրուի: Տիկնանց Որբախամ Ընկերութիւն եւ Ազատ Լսարանի Վարչութիւն



ՇԱՐԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՉԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Կը հրատարակուի ամէն Շաբաթ օրեր, ՏԻԳՐԻՍ Հրատարակչական Ընկերութեան կողմանէ: Ե. ՂՈՒՄՐԻԿԵԱՆ, ԳԱՆՁԱՊԵՏ - ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳԱՑ ՈՒ ՔԱՆԱՏԱՅԻ ՀԱՄԱՐ	ՕՏԱՐ ԵՐԿԻՐՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ	Տարեկան 10 Ֆրանք
Տարեկան 50	Տարեկան 10 Ֆրանք	
Վեցամսեայ 25		
Եռամսեայ 10		

Երար կամ նամակ ուղղել հետեւեալ հասցէին՝ To the DICKRIS PUBLISHING CO., 628 Third Ave., New York City. Entered at the Post Office at New York as Second-Class Mail Matter.

ՆԻՒ ԵՈՐԻ, ՇԱՐԿԱՆ, ԱՊՐԻԼ 30 1898.

Ո Մ Բ Ա Գ Ր Ա Կ Ա Ն Ք

ՊԱՏԵՐԱԳՈՒՄ ԵՒ ՈՐԲԵՐԸ

Հաւորներով: Հավանայի և Մաթանդայի բերդերէն թնթա- նօթներն սկսած են գոռալ: Մովակալ Սամսոն վերջապէս պիտի սկսի ուժարկով Բիւպայի մայրաքաղաքը, որոյ առ- ջև խորտակուած Մէյնի բեկորներն լռելեայն կը բողբոջեն ու վրէժ կը գոռան միշտ: Ընթել Սամի Ասիական նաւա- տորմիլն Հօնկ Բօնկէ ճամբայ ելած՝ Ֆիլիպին կղզիներու վրայ կը քալէ՝ Մալիան պաշարելու համար, և կը կարծուի թէ առաջին ճակատամարտը տեղի պիտի ունենայ՝ հոն սպասող Սպանիական նաւատորմիլին հետ: Յամաքի վրայ ոգևորութիւնն խիստ մեծ է, կամաւորներն գունդ ի գումար կ'երթան Նախագահի կողման պատասխանելու համար: Պատրաստութիւններ կ'ըլլան ամեն կողմ՝ Սպանիական նա- ւատորմիլին լաւ ընդունելութիւն մը ընելու համար, և թէ այս վերջինն հաճի այցելել այս կողմեր:

Ի հարկէ այս իրարանցումին մէջ ամեն ոք կը փափաքի օրական լուրերն առնել ժամանակին: Լրագրութիւնն կար- ծես մտնալով ամեն բան վառօք կը բուրդի ծայրէ ծայր, վասնզի պատերազմ կայ, մարտ կենաց խնդիր: Իսկ ժողովուրդը կարծես ուրիշ ոչինչ կարդալ կ'ուզէ. ընթեր- ցող հասարակութեան միտքը պատերազմի խնդրով զբա- ղած է, և պէտք է այդպէս լինի:

Մենք՝ ամերիկեան Հայերս ալ տեղացիներու չափ օր- ւան ամենատաք խնդրով զբաղուած ենք: Պատերազմ կայ: Բայց սպանիո-ամերիկեան պատերազմին չափ կենսա- կան ու վտանգաւոր ուրիշ պատերազմ մ'ալ կայ մեզ հա- մար, զոր չենք կրնար մոռնալ ուրիշ երկրորդական խն- դիրներու պէս: Սպանիական պատերազմը դեռ նոր սկսե- ցաւ, բայց Հայ ազգին պատերազմը կը շարունակուի տա- րիներէ ի վեր, զայն հրատարակած է Հայ ազգը Թուրքիոյ, անպատմելի, սուլթանին դէմ: Ընթել Սամ ճնշուած՝ ու չարչարուած ազգի մը շղթաները փշրելու, և իր գաւա- կայ վրէժը լուծելու համար իր ժանգոտ սուրը պատեա- նէն հաննց աներկիւղ, իսկ մենք Հայ որբերը ազատելու համար, դաճճին դէմ մաքառել յանձն առած ենք՝ առանց զինու և առանց նաւատորմիլի: Ասոնց երկուքն ալ յա- նուն մարդասիրութեան մղուած կռիւներ են. բայց մերինն աւելի բարձր և կենսական նշանակութիւն մ'ունի իր փոք- րութեան մէջ անգամ:

Արդարև ուրախալի է ըսել թէ ամերիկայի Հայ գաղ- թականութիւնն ըստ բաւականին զբաղած է որբերու խնդ- րով: Այս ճակատամարտին համար բաւական օգնութիւն զրկուեցաւ Ամերիկայէ՝ և կը զրկուի տակաւին. բայց թըշ- նամի բանակը անհամեմատ զօրաւոր է. մեր քանքերն կրկնապատկուելու են՝ պատերազմը շահելու համար:

Այս երեկոյ Գաղաքի Որբախնամ Տիկնանց ընկերու- թիւնն ու ազատ շարանի վարչութիւնն՝ յատուկ հանդի- սի մը մէջ՝ կամաւորներու (նուէրներ) կոչում պիտի ընեն սահմանազուրկ զրկուելու համար: Հոն մեր կուռող զին- ուորները օգնութիւն կ'ուզեն՝ չարչարուած, մերկ քան- տեր ու քաղցած Հայ-Բիւպայցիները —անպաշտպան որբե- րը— փրկելու համար:

Բիւպայցիներ օտար է ամերիկացիին համար. օտար՝ ազ- գաւ, օտար՝ լեզուով և կրօնիւ: Բայց Հայաստանի որբերը, որք նիհար ու դաւաճար՝ ծնկի եկած օգնութիւն կը խնդրեն մեզմէ. մեր զաւակ- ներն են, մեր որբերն են:

Եւ հաց կ'ուզեն... 2. 5.

ՈՐԲԵՐԸ

Մասնաորակէս տարիէ մը ի վեր յաճախակի կը խորհ- ուէր ու կը խօսուէր որբերուն համար հանգանակութիւն մը ընելու պէտքին վրայ. բայց այդ խորհող անձինք չէին ուզեր նախաձեռնարկ ըլլալ, զանազան նկատումներով զօրս այժմ բացատրել երկար կըլլայ: Ի զուր ամիսներ սպասելէ վերջ երբ տեսն որ անտարբերութիւն կը տիրէ և ժողո- վուրդն առաջնորդելու յաւակնութիւն ունեցող անձինք բնաւ ուշադրութիւն չեն դարձներ այդ սուրբ գործին, դարձեալ իրենք յառաջ անցան ու ժողովուրդին միտքը պատրաստելու ետեւէ եղան՝ յաջող արդիւնքի մը հասնելու բաղձանքով:

Վերջապէս որոշուեցաւ Մարտ 17 ին գումարուիլ Ց. Հ. Գ. Մ. սրահին մէջ ու հանգանակութեան ձեռնարկել: Ընթել օրէն 2—3 շաբաթ առաջ ծանուցուեցաւ ժողովուրդին թէ քիչ օրէն երեկոյթ մը պիտի տրուի այդ նպատակաւ: Բողոքական ազգայնոց միութեանը նամակով խնդրուեցաւ որ սովորական ժողովներուն մէջ ծանուցանէ ժողովուրդին, և յորդորէ զանոնք որ ներկայ գտնուին երեկոյթին: Բայց չենք գիտեր թէ միութեանը ինչ պատճառաւ այդ նամակի պարունակութիւնը չը ծանոյց ժողովուրդին . . . :

Այս կարգի միջոցներ ձեռք առնելով և խնդրոյն կարե- ւորութիւնը նկատելով կը կարծուէր թէ մեծ բազմու- թիւն մը ներկայ պիտի գտնուի երկոյթին: Բայց ո՞րչափ յուսախաբուութիւն: Նոյն օր գրեթէ թափուր էր սրահն. մի քանի ընտանիքներ միայն ներկայ էին: Ուր էին Հայերու մեծագոյն մասը: Գաղանիք մը չեղաւ այդ երբ չուտով իմացանք թէ՛ տեղուոյ հինաւուրց Պատուելին իւր արան- եակներովը՝ միայն իրենց նորեկ միութեանին հետ՝ որբե- րու խնդիրը Լուսաւորչականութեան խնդիր համարելով, ուղղակի և անուղղակի միջոցներ ձեռք առած էին որ բո- ղոքական ազգայինք ներկայ չը գտնուին այդ երեկոյթին: Եւ որպէս զի աւելի ապահով ըլլան իրենց նպատակին հասնելու՝ նոյն երեկոյթին իսկ կ'որոշեն խնդրը մը ընել (Սրբորայգ Փար- թի)՝ միութեանին տունն: Մենք գիտաւորութիւն չունինք խօսիլ այդ Փարթիին նպատակին ու հոն տեղի ունեցած խօսակցութեանց մասին, միայն սա կուզենք ըսել թէ այդ անձինք զէթ այնչափ Բիւպայցիական զգացում թող ու- նենային որ այն օրը չը կատարէին իրենց Փարթիին և պատ- ճառ չըլլային դաս մը Հայերու որբերուն համար եղած հանդէսէն բացակայ մնալուն: Գիտենք թէ նոր չէ այս հա- կաւորութեան յոյսը, բայց երբ այսչափ ուղղակի և որոշակի կերպով կը պարզուի՝ յայնժամ կ'ստիպուինք այդպիսեաց սև հոգին ներկայացնել հասարակութեան:

Որբերու համար գումարուած ժողովն նկատելով որ այդ խնդիրը առժամակեայ հանգանակութեամբ կարգա- դրուելիք խնդիր չէ, լաւագոյն համարուեցաւ որ բաժա- նորդարութիւն մը բացուի մէջ տարուայ համար. և որպէս զի ամենուն դիրամառաջելի ըլլայ այն՝ որոշուեցաւ ամսա- կան 25 սենթ բաժնեգին, մէկէ աւելի բաժնի գրուելը թս- ղելով իւրաքանչիւրի կարողութեան: Ստիպողական պէտ- քը նկատելով որոշուեցաւ բաժնեգինները Յունի. 1 էն հաշ- ուելին, եռամսեաները կանխիկ վճարումը: Նոյն երեկոյ իսկ 95 բաժնիներ գրուեցան, որոնց թիւը վերջէն 120 ելաւ: Առաջին եռամսեաները անցնել օր զրկուեցան Ս. Պատրի- արքին: այսպէս պիտի զրկուին յաջորդաբար: Գրամոց գանձ- ման և այլն կարգադրութեանց համար յանձնախուսմը մը ընտրուեցաւ երեք անձերէ, որոնք ուրիշ անկիցներու հետ Պիտի աշխատին բաժանորդաց թիւը աւելցնել և ջանալ որ գէթ 2—3 տարի շարունակուի այս եղանակաւ:

Բացի բաժնեգիններէն, § 20 բացէն նուիրատուութիւնք եղան: Բաժանորդաց և նուիրատուաց անունները շըր- կեցինք հրատարակութեան համար:

Ե. Մ. ՆՇԻԿԵԱՆ

ՄԱՀԱԳՈՅԺԵՐ

Յաւօք կը ծանուցանենք թէ անցեալ Ուրբաթ Փրօվի- տէնսի հիւանդանոցին մէջ, կարճատև հիւանդութենէ մը վերջ, Տիգրանակերտցի Տիգրան Ճէրահեան, 22 տարեկան հասակին մէջ իր մահկանացուն կնքեց:

Նոյն պէս Քլիվլէնտի մէջ իր մահկանացուն կնքած է նիկոմիդիացի Բենիամին Կարապետեան անունով 23 տարե- կան երիտասարդը:

Վաղը Արժ. Սաք Վարդապետ հանդիսաւոր Ս. Պատա- րազ պիտի մատուցանէ Ս. Ոսկերբան եկեղեցւոյն մէջ: Ետ Պատարազի Արժ. Ս. Սաք Վրդ. պիտի քարոզէ, նիւթ ունենալով՝ «Հայաստանեայց Եկեղեցւոյ Սկզբնաւոր- ութիւնը»:

Ամեն Հայ կը հրաւիրուի ներկայ գտնուիլ: Մայիս 1, Նիւ Եօք. Ազգ. Հոգաբարձութիւն

Վաղը երեկոյ Ազատ Լսարանի մէջ պիտի խօսին Տ. Գ. Չիթճեան՝ նիւթ ունենալով «Բիւպայի Ազատութիւնը». և Տ. Բ. Արչակունի: Լսարանին մէջ ժամը 7ին ազգ. երգեցողութեան դաս պիտի արուի:

ՀԱՅ ՈՐԲԵՐԸ

ՏԻԳՐԻՍԻ ընթերցողները, մաս- նաւորապէս, գիտեն թէ յառաջիկայ շաբաթ երեկոյ՝ Ապրիլ 30ին, մեծ և փառաւոր հանդէս մը պիտի տրուի ի նպաստ Հայաստանի որբերուն:

Տարակոյս չունինք թէ ամեն Հայ մասնաւոր գոհունակութիւն մը կը տածէ դէպի Հայուն հաց Որբախնամ Ընկերութիւնը, և դէպի ազատ լսա- րանը՝ որոնք այդ հանդիսին պատ- րաստութեանը ձեռնարկեցին. սա- կայն այդ հանդէսը՝ ինքնին, եթէ տասնապատիկ պերճութիւնով այ ներ- կայացուի, ինչ գոհունակութեան արժանի արդիւնք յառաջ կրնայ բե- րել, եթէ մէն մի Հայ անհատ՝ իւր կարողութեան չափովը, մէկ տոմ- սակ զենելով չմասնակցի անոր յառաջ բերելիք նիւթական արդիւնքին:

Թէպէտ և ցարդ ինքզինքնիստ ա- կընկալածնուս շափ քաջալերուած չենք գտած, հանդիպելով ոմանց՝ որք կը վարանին, և այլոց՝ որք կը մեր- ժեն փոքր կամ մեծ տոմսակ մը գը- նելու. սակայն քաղցր է մեզ հաւա- տալ թէ ի նպաստ Հայաստանի շար- դեբէն մնացած որբերուն. . . ճայնք ներքին է, կուզայ Հայաստանի խո- բեբէն, Հայու վէրքեբէն՝ և կը խօսի ամեն Հայու սրտին. հետեւաբար ա- մեն զգայուն Հայ պիտի անայ անոր ու իր կարողութեան ներածին չափո- վը պիտի գնէ տոմսակ մը՝ մասնակ- ցելու հանդիսին յառաջ բերելիք ար- ջիւնքին, նկատելով առակը որ կ'ը- սէ «Կարելի կաթիլ լինի կ'ըլլայ»:

Սիրելի Հայերնակից! Քու տուած 50 սենթ կամ մէկ տոյարգ միանա- լով ուրիշներու տուած սենթերուն՝ պիտի կազմեն մի քանի հարիւր տո- արներու մեծ գումար մը, որ պի- տի երթալ 25-30 որբեր խելու՝ յուր- տի, մերկութեան ու անօթութեան վայրագ ճիւղաններէն և յանձնէ դա- ննոք որբանոցի մը մէջ՝ մարդկան ու հայրական խնամքներուն, ուր միութեանին, սպիւրն ու դաստիա- րակուին, օր մը Հայրենիքին օգտա- կար դաւաններ ըլլալու: Այս հան- դէսը վայելելու համար զոճէ՛ք քու քանի մը սենթ երդ, և թ'ո՛ղ քու զըր- տինքիդ քանի մը կաթիլները երթան սփոփել, փրկել ու դաստիարակել անտէր ու անտիրական մնացած Հայ որբը:

Հայուն հաց Որբախնամ Ընկ.

—Մեր Թրոյի թղթակիցը կիմա- ցնէ մեզ թէ Ս. Յարութեան օրը Տ. Ե. Ճէֆէրանի տան մէջ հաւաքուած 15 անձերու մէջ՝ տեղույն Որբախ- նամ Ընկերութեան անդամներէն եր- կուքը հանգանակութիւն մը բացած՝ ու § 7.94 հանգանակած են: Թրոյի Որբախնամ Ընկերութիւնը 19 ան- զամներ ունի, որոնց 3ը գեղեցիկ սե- ւին կը վերաբերին:

—Տ. Մաշթոյ վարդապետը § 25 ստացած է շօլիեօքի Որբախնամ Խըմ- բակէն, զոր զույսացած է ոսկի ժամացոյցի մը վիճակահանութեանէն, և § 15 Ուս- թըրի Դերասանական Խումբէն, ի նպաստ որբոց:

98 Ապրիլ 25, Պրայիթին Մէս. ՏԻԳՐԻՍԻ մէջ կարդացինք թէ «Ինչո՞ւ մեր 60000 անօթի և անպա- տրաստ որբերու խնդիրը կրակոտ Հարց մը չ'ըլլայ ամեն անհատի հա- մար»:

Եւ մենք ուշադրութիւն դարձ- նելով այս խնդրոյն վրայ 20 անձե- րու մէջ 10 տղար հաւաքեցինք՝ 301 Ուէսթըրն Ալիւիի ճաշարանին մէջ: Կը յուսամ որ ամեն անձ իւր շաբաթականներն ալ պիտի վճարէ: Մ. Ա. ԹԱԳԻՈՐԵԱՆ

— Ուսանողները կառավարող թիւերը պաշտօնագրէս յայտարարեց թէ պատերազմը հրատարակուած է Ապրիլ 21 էն ի վեր:

— Բի Ուէսթ էն հեռագիր մը կը սէ թէ երեք սպանիական մեծ շոգենաւներ ալ գերի բռնուեցան Հաւանան պաշարող նաւատորմիդէն:

— Մովակալ Տուվիի նաւատորմիդը վաղը Ֆիլիպինները կը հասնի: Սպանիացիք անոր գալտեան կապանն կուտելու համար: Կըսուի թէ երբ երկու թշնամի նաւատորմիդները կրակել սկսին, կըզիտ արտամըններէն 30.000 հոգի Մանիլայի վրայ պիտի յարձակին, իրենց պարագլխի՝ Թէնէրէյ Աժենալտոի հրամանատարութեամբ:

— Վ. ձ. Պրայն, նախագահական ընտրելին, մտադիր է կանոնաւոր հասարակ գիւնուր մը գործել իր Հայրենեաց ծառայելու համար:

— Սէնեթը Բրիտանի, Իտալիոյ նախարարացեալը, ըսած է թէ այս պատերազմը Սքանիոյ վերջն է:

— Երբ Մովակալ Սամսոն սկսի ուժակոծել Հաւանան, Գոմէզ, Բիւպայի յեղափոխականաց Ջորալարը, 40 հազար զօրքով նոյն քաղաքին վերայ պիտի յարձակի:

— Բիւպայի ընդհ. կառավարիչ Ջոր. Պլանքո հեռագրած է Մասաչուսէթս նաւատորմիդի մը պէտքը շուենի կըզիտ պաշտպանելու համար:

— Փորթո Րիքոյի սքանիական կառավարութեան դրամատունը իր վրձարումները դադարեցուցած է: Պարզ խօսքով սնանկացած է:

— Արտաքին գործոց նախարար Շէրմընը հրատարակեց: Կըսուի թէ ստիպած էին զինքը հրատարիլ այդ պատճառով ծերացած ու յիշողութեամբ տկարացած ըլլալուն համար: Իր օգնականն ձեռն ճէյ յաջորդեց իրեն:

27

— Լոնտոնէն հեռագիր մը կըսէ որ Հաւանայէն լուր տրուած է թէ Բարաիէնս ծոցին (Բիքուա) մէջ ամերիկեան և սքանիական երկու մարտանաւերու մէջ կռիւ ծագած է. երկուստէք տասնամեկական թնդանօթ արձակած են, ու ամերիկեան նաւ յետս նահանջած է փաստած, իսկ սքանիական նաւու ծիւնելոյցը միայն կուտարած է: Կը կարծուի թէ ամերիկեան նաւը Բուշիլինն է, սքանիականն է Լիթթեր:

— Թէրըրը զրահանաւը սքանիական Պոլիվըր մեծ շոգենաւը գերի բռնեց: Մինչև այսօր ամերիկեան նաւատորմիդը թշնամիէն 12 նաւեր գերի բերած է:

— Թղթատրական նախարարը հրաման ըրաւ Սքանիա զրկուած նամակները բանալ՝ զրկելէ առաջ:

— Գերմանական ազդեցիկ լրագիր մը կը կարծէ թէ այս պատերազմը Եւրոպական հաւասարակշռութիւնն պիտի խանգարէ. ու նոր նիզակակցութիւն մը առաջ պիտի բերէ, Միացեալ Նահանգաց, Ազլիոյ և ձաբոնի մէջ:

— Վոլ Ըսթրիթի վրայ գտնուող ամերիկեան գանձարանը, ուր 164 միլիոն տօլարի չափ պահեստի դրամ կայ, պաշտպանելու համար մեծ պատրաստութիւններ կըլլան. շէնքին վրայ քանի մը թնդանօթներ պիտի դրուին:

28

— Ուսանողներէն հրաման զրկուեցաւ Մովակալ Սամսոնի ուժակոծել Մանիլայի բերդերն ու թոյլ չտալ թշնամիին որ առիթ ունենայ ամրացնել նաւահանգիստն, հրամանը կատարուեցաւ: Մանիլայի ամրոց-

ները քանդուեցան, թնդանօթները լսեցին ու սքանիական շատ զօրքեր մեռան ու վիրաւորուցան: Այս ամենն 18 րոպէի մէջ կատարուեցաւ, երեք ամերիկեան զրահանորներու կողմէ, որք ո՛չ մէկ փնաս կրեցին թշնամիի կրակէն:

Սքանիական նաւատորմիդը դեռ Բէյի վէրտէ ճամբայ չէ ելած: Ուսանողները կառավարութիւնը Փորթուգալը նիզակակցի պիտի նկատէ Սքանիոյ, եթէ անմիջապէս սքանիական նաւատորմիդը չարտաքսուի անկէ:

ՇԱՐԱԿԱՆ ԲՐՈՆԻԿ

Դարձեալ հարիւրաւոր երիտասարդներ լեցուցած էին անցեալ կիրակէ երեկոյ Ազատ Լսարանի սրահը: Դարձեալ երկու հակառակ դպրոցի աշակերտներ կը բարձրանան բեմը: Դրական, վաճառական մարդէն վերջ, իտէալական, գրական մարդն է որ կը խօսի: Ես շատ զարմացի եմ Լրատարանի այս հաշտարար ոգիին վրայ:

Այս անգամ առաջին խօսողն էր քաղաքիս ծանօթ հնագույն վաճառական Տ. Տ. Բէլէկեանը, որուն նիւթը ոչ թէ ուրիշ վաճառականի մը պէս մեղ հարստացնել էր, այլ ժամի մը չափ պատմեց մեզ մեր ժամանակին Հայրենիքին մէջ ունեցած հարստութիւններու վրան: Հայրենի հողին տակը անգին քարեր, անթիւ գանձեր ունինք թաղուած, ըսաւ, և մեր շատ մը թագաւորներուն կոխած դրամներուն վրայ հետաքրքրական տեղեկութիւններ տուաւ մեզ: Չը կըցայ միտքս պահել թէ Հեթոմի թէ ուրիշ Հայ թագաւորի մը միակ պղնձէ ստակը հարիւրաւոր տօլարներ կ'արժէ այժմ եթէ գտնուի: Առաջին անգամն է, ճշմարիտ կ'ըսեմ, որ Հայ վաճառականի մը բերնէն այնքան Հայ թագաւորներու անուններուն իրարու ետեւ շարիւղ կը լսեմ: Տ. Բէլէկեան թէ և պատմադէտ մը չէ, գէթ հնագէտ մըն է, գէթ մեր մէջ:

Միւս խօսողը (Մշակ) ի թղթակցի կողմէս Հայ Տ. Հ. Արզումանցը էր. այս քրոնիկին մէջ կարիւր չէ երկար խօսիլ առնախօսի անձին վրայ, որովհետեւ երկար խօսիլ կարժէ: Իր ընտրած նաւթին վրայ (անհատին դերը) իրմէ զատ մէկը այնքան լաւ կերպով չէր կրնար խօսիլ: Սահուն, սիրուն ոճով մը Տ. Արզումանեանց ցոյց տուաւ մեզ վսեմ անհասին բարձր և շինիչ գերը ընտանիքին, ազգին և Հայրենիքին մէջ. և, ընդհակառակն, ցած, անազնիւ անհարկ աւերիչ գերը անոնց մէջ: Թ. Չ.

ԲԱՆԱՍՏԵՂՍԱԿԱՆ ՄՐՑՈՒՄ

Ի Մ Ս Ի Ր Ա Մ Ս

Իմ սիրածն է մշտուած տեսնել Ամեն կապանք ստրկութեան, եւ գլորուած անդունդն անել Բոլոր կարգ, սարք, միահեծան:

Իմ տենցաքն է: Իմ սիրածն է որ Հայ ցեղը Անդուլ ջանայ տեսնել այդ օր, եւ մարդկութեան որդանը իր ապագան պարտի անոր:

Իմ բարձանքս է: Իմ սիրածն է որ յետագայ եղբայրութեան կոթողին վերն Յիշատակուի Հայը ներկայ, Ինչպէս մէկ ազգ ճանչըցած իր դերն:

Իմ սիրածն է: Ապրիլ 6, Պոսթօն Ս. Հրոց:

Մ Ա Ն Ր Ա Ն Ո Ւ Ր Ք

Ուսթըրէն մեղ կը գրեն

«Անցեալ Շաբաթ երեկոյ Ուսթըրի մէջ կատարուեցաւ Տ. Գրիգոր Սրապեանի (Մօյսոնէն) պատկի խորհուրդը Գր. Աղաւնի Պաղտատարանի հետ: Փեսայի հանդերձները հազցընելը աճուրդի դրուեցաւ. Տ. Նալպանեան ճ 7 նուիրելով որոց՝ Փեսան ինք հաղցուց: Ուսթըրի նուագածուաց խումբը գեղեցիկ կատարներ զարկաւ: Հայ Պատանեաց խումբը ճ 4.95 հաւաքեց որոց համար:

Մանուցուած նուագահանդէսը, ինպատ որոց, տրուեցաւ անցեալ օր: բաւական թուով Ամերիկացիներ ներկայ էին հանդէսին: Մեր բողոքական եղբայներու տուած այդ հանդէսը աւելի Ամերիկեան ճաշակով պատրաստած էին քան Հայկական:

Ապրիլ 30ին Որբախնամ Ընկերութիւնը Արշակ Բ. ի ողբերգութիւնը պիտի ներկայացնէ, Ս. Փրկչի սրահին մէջ, ինպատ որոց: Կը յուսանք որ ամեն Հայ պիտի փութայ օգնելու թշուառ որոցս:

— Ապրիլ 18ին Օր. Լուսիա Յակոբեանի նշանախօսութիւնը տեղի ունեցաւ Տ. Կ. Մկրտիչեանի հետ Ի Չօլիօք:

— Տիկնայք Սէյրանեանի և Մուրատեանի դատը տեսնուեցաւ անցեալ օր Լինի դատարանին մէջ, ու Տիկնի Մուրատեան ապարտ արձակուեցաւ: Մեր թղթակցը խիստ կերպով կը քննադատէ զՏիկնի Սէյրանեան և ցաւ կը յայտնէ որ Հայ կրներն ալ ջնջին խնդիրներու համար դատարաններու դիմել սկսած են:

— Լինէն կը գրեն թէ տեղւոյն Բազմաշէնի Ուսումնական Ընկերութեան անդամներէ ոմանքը կը ջանան նոյն ընկերութեան դրամը գործածել այժմ, հակառակ կանոնադրի այն յօդուածին թէ ընկերութեան պատրաստ դրամը մինչև որ 250 լիւրայի չի հասնի, կարելի չըլլայ զայն իր նպատակին համար գործածել:

— Մեր Հրատարակիչը կը գրէ «Բըպլըրի գործարանին մէջ աշխատող Յովհաննէս Գազանճեան անուն անձը չորեքօրորդուոյն նոյն գործարանի մէջ գործ մը առնելու համար ճ 15 կաշառք կը պահանջէ. Մարտիրոս Գազանճեան կը խոստանայ վճարել, բայց կը մերժէ վերջէն: Կըսուի մը կը ծագի, և Յովհաննէս ատարճանակ քաշելով դարնել կապտանայ. և ոտտրկան կանչուելով կը ձերբակալէ զայն: Դատաստանը հետաքրքրական եղաւ: Հայ և տեղացի ժողովուրդը խումբ խումբ դատարան կ'անայ այս դատին ներկայ գտնուելու համար: Յովհաննէս ուրոցաւ ամբաստանութիւնը. վկայները բաւական չեղան ամբաստանութիւնը հաստատելու համար: Ուստի ամբաստանողը 10 խկ ամբաստանաւր 5 Տօլ. տուգանքի դատապարտուեցան: Տեղացիք կը պախարակեն Հայրը ըսելով թէ ինչ տեսակ մ'արդիկ են ասոնք. ամօ՛թ »:

Ձ Ո Ւ Ա Ր Ձ Ա Լ Ի Ք

— Տիկնի, Ձեր ամուսնի պատերազմական փորձառութիւնը 62 ին կ'սկսի, այնպէս չէ՞:

Տիկնի—Չէ, մենք 78ին տմուսնացանք:

— Պատերաստուէ՛, Պարոն

— Ուր,

— Պատերազմի

— Ես երեք տարիէ ի վեր է կը պատերազմիմ:

— Որո՞ւ հետ

— Գործատիրոջս հետ՝ ապրուստս ճարելու համար:

ՌՈՒՍ ՈՉՆՉԱՎԱՆԱՅ ԴԱՏԱՍՏԱՆԸ

ԱՆԳԼՈՅ ՄԷՋ

ՄԱՍՈՒԼԻ ԱՋԱՏՈՒԹԵԱՆ ԱՍՀՄԱՆԸ

(Շարունակութիւն)

Այդ բերդին մէջ մտնելը շատ դիւրին է, բայց մէկ մը մտնելէն վերջ անկէ դուրս ելլելու հազիւ թէ հնարաւորութիւն կայ: Իմ պաշտպանեալս՝ երկրորդ վարչական հրամանով մը բանախի կուղիին, ուր յարաբերութենէ զուրկ փակուած էր, կը փոխադրուի Սիպերիոյ մէկ անկիւնը՝ քաղաքակրթութենէ 4—5000 մղոն հեռու տեղ մը: Իր բոլոր սիրելիներէն բաժնուած, իր յանցաքին անտեղեակ կը մնար հոն, առանց երբէք տեսած ըլլալու Ռուս դատաւորի մը երեսը: Արդեօք բաւական չէ՞ որ մարդու մը ամբողջ բնութիւնը բմրոտ սանայ դրութեան մը դէմ որը կը թոյլատրէ այսպիսի անարարի ոճրագործութիւն մը: Ռուսիոյ մէջ երբ մարդ մը գաղափարի տէր կը հանդիսանայ, իր տունը Սիպերիոյ է, իրեն գաղափարակիցներովը և բարեկամներովը միասին: Ինքը այդ անմեղ բարեկամներու մէկ կիկ անյայտանալը տեսաւ—կամ կամովին սովամահ ըլլալով, կամ խնլագարելով և կամ անձնապաշտութիւն գործելով իրենց ձեռքը անցած գործիքով: Անօթութենէ մ'հեռիլ ուզողներու կողորդէն վար բռնի կը լեցնէին կերակուրը, որ չ'մոռնին: Զարգացած աղջիկ մը՝ բանտապահին կողմէ իր պատուին բռնաբարու մէջ ազատելու համար՝ գգնատին վրայ քարիւղ թափեց ու բռնկեցուց: Ահա այս տեսակ տեսարաններու հանդիսատես եղած է ամբաստանեալը, և այս երջանիկ երկրի (Սիպերիոյ) մէջ ընկողներէն ո՞վ է այն մարդը որ այնքան խուզարկու աչքերով նայի այս տեսակ ողբերգութիւններու ակնատես եղած անձի գրչէն ելած անկէ մէկ նախադատութեան, ամեն մէկ բացատրութեան վրայ: Այն յօդուածները որոնց պատճառով պաշտպանեալս ամբաստանուած է, պարզապէս Ռուս կառավարութեան մէջ տիրապետող եղանակներուն մէկ զգօն, հանդարար ու փիլիսոփայական ուսումնասիրութիւնը կը ներկայացնեն: Ս'ըստստանեալը համոզում գոյացուցած է թէ հեղինակ այս ամեն շարիքներուն որոնցմէ կը տուտապի իր երկրէ՝ Ռուս կառավարութիւնն է: Ուղիղ կամ սխալ կրնայ ըլլայ այս կարծիքը. բայց թէ ինքը ասոր հոգեով չափ համոզուած է, բնաւ տարակոյտ չի վերցնի: Կարծիքի ազատութիւնը կը տրեք այս երկրին մէջ՝ մարդ մը իրաւունք ունի ո՛ւնէ նիւթի վրայ ո՛ւնէ գաղափար արտայայտելու: Եթէ ամբաստանեալը այն գաղափարը գոյացուցած էր թէ Չարին սպանութիւնը իր երկրին ազատութիւնը կը նշանակէր, —որչափ որ գայթակցուցնէր ու անբարոյական ըլլայ այդ գոյացումը — ինք իրաւունք ունի այդ կարծիքին տէրը հանդիսանալու: Ս'ըստստանեալին կողմէ ամենաթիւթե գիտաւորութիւն մը գոյութիւնը չունի որ և է մէկը ուղղակի գրողու որ Չարը սպաննէ, և ամենամանկան պապոցոց մը չըկայ որ ամբաստանեալը գործած ըլլայ այդ տեսակ արարքի մը գործադրութիւնը գրող ունէ գործ մը: Ընդհակառակը (գրողիչէն կտոր մը մէջ բերելով) «Մեր անմիջական նպատակը պէտք է ըլլայ բռնակալութեան ջրնջումը, Պետութեան վերաբերող ամեն իրերուն արդի վարչութեան Պաշտօնեաներու ձեռքէն առնուելով՝ կանոնոր ձեռով ընտրուած՝ ժողովրդային ներկայացուցիչներու ձեռք յանձնումը: Դաշնակցական դրութեան մը հաստատութիւնը, նահանգային և տեղական ինքնավարութեան ընդարձակ դրութիւն մը, անհատական իրաւունքներու ապահովութիւն ամենուն համար, ազատ խօսքի, ազատ մամուլի՝ իրաւունք, անհատներու և ազգայնութիւններու ազատութիւնը, ևն »:


ՍՈՒԻՆ

Լ Ո Յ Ս Տ Ե Ս Ա Ի

ՐԱՅՑԻԻ
ՍԱՄՈՒՆԷԼ (Պատմական վէպ)
Ա. Բ. և Գ. Գիրք
Գրին է § 1.75

Իսկ «Դաւիթ-Բէկ» Հատոր Ա. Բ. և Գ. վերջնալուծ, և «Կայծեր» Հատոր Բ. լիակատար, լոյս պիտի տեսնեն ներկայ տարույ ընթացքում, որոնց բաժանորդագրութիւնն շարունակուած է. երկու գրքի միասին բաժանորդագրին է՝ § 2½, իսկ լոյս տեսնելուց յետոյ կ'արժենան § 3½: Յանկացողները թէ՛ «Սամուէլի» և թէ՛ «Բաճիթի» միւս երկերի համար, կարող են դիմել Հետեւեալ հասցէին՝

Mme. Raffi 270 Uxbridge Road Shepherd's Bush, London W.
Վերջերս ոմանք որոշ գներէն աւելի սկսած են վաճառել այս գրքերը, իբր գրավաճառ իրենց շահը աւելցնելով անոնց վրայ:
Նիւ Եօրքի միակ ներկայացուցիչն է Տ. Մ. Թաճեան, 251 Ուիլիամ Սթր. որ առանց շահու կը վաճառէ Բաճիթի բոլոր գրքերը:



ԲՐԻՏԱՆԱԿԱՆ, ՀԱՄԱԳԻՏԱՐԱՆ
Ձերորդ Տպագրութիւն
Մաքուուէլ Սըմըրվու
Հրատարակիչ
Կո բաղկանայ 25 մեծագիր Հատորներէ, որք կը վաճառուին բաժանորդագրութեամբ միայն:
Սոցա գրին է,
Կտուեայ կազմ 62 տղ. 50 սէնթ
Կէս կաշիակազմ 87 " 50 "
Փասակազմ 100 "
Առաջին տեսակէն կը դրուի անոնց որք յանձն կառնեն վճարել ամիսը 2 տարի 50 սէնթ: Երկրորդին ամսավճարն է 3 ու կէս տարի, իսկ վերջինին՝ 4 տարի:
Այս Համագիրատարան Ամերիկեան միակ արտօնեալ տպագրութիւնն է. մնացեալք անկատար են ամեն կերպով: Մանրամասնութեանց համար դիմել իմրագրութեանս:

Ն Պ Ա Ր Ա Վ Ա Ճ Ա Ռ Բ
Ա ս լ ա ն ե ա ն և Ո ս պ ի կ ե ա ն
317—Իսթ 45րդ Փողոց
Մաքուր, աժան, տեղական և Արևելեան ապրանքներ: Կը ծախենք նաև շայրիէ, պուլուր ևն:

Ա.Ջ.Գ
Ամէրիքըն Ռըպըն Բօ., Սաութհ Նորվուք, Բօնն. առաջին կարգի Ռըպընի գործառններ կուզէ: Ընտանիքով եղողներն աւելի նախաձեռար կը համարուին: Դիմել նա Կրիպըր, 496 Պրուս փողոց, առաջին յարկ:
Երեւեցէք ըսել թէ ՏիԳրիՍի մէջ կարդացիք այս ծանուցումն:

Ա.Ջ.Գ

23րդ փողոցի եկեղեցւոյ Հայերէն պաշտամունքը՝ որ 5 տարիէ իվեր կը շարունակուէր Պատ. Յակոբեանի առաջնորդութեամբ, միացած է 42րդ փողոցի Պատ. Եուհաննայի Հայերէն պաշտամունքին հետ:

Որովհետև այս երկու եկեղեցիները կը վերաբերին միևնոյն յարանուանութեան, և երկուքի նպատակն է Հայոց Հայերէն լիզուով պաշտամունք կատարելուն օգնել. ուստի այս եկեղեցիներու վարչութիւնները յարմար դատած են միացնել Հայերէն երկու պաշտամունքները: Ուստի բոլոր 23րդ փողոցի եկեղեցին յաճախող եղբայրներէն կը խնդրուի այսուհետև յաճախել 42րդ փողոցի եկեղեցւոյ Հայերէն պաշտամունքին, Կիրակի օրերը կէսօրէն ետքը ժամը 4½ին, ուր Պատ. Եուհաննայի և Յակոբեանի միասին պիտի կատարեն պաշտամունքը:
Ապրիլ 30 Պատ. Եուհաննայի
Պատ. Յակոբեանի

Առաջնակարգ խալի նորոգող արհեստագործներ կ'ուզուի: Դիմել նա՝ մակաւ միայն ՏիԳրիՍի իմրագրութեան:

Հ Ի Ր Չ Օ Լ Ա
ՄԱՋԻ ԴԵՂ



Կը քերտնէ, կը մաքրէ, կը փայլեցունէ մազերը ու թափելը կը դադարեցնէ: Կը բուժէ նաև մորթի Հիւանդութիւնն ու կը մաքրէ թեփերը:
Միանգամ փորձել բաւական է սաղեղին արժէքը գիտնալու համար, որ արևելեան խոտեղէ պատրաստուած է յոյժ հաճելի միջոցով:
Կը ծախուի բոլոր գեղարքներէ. բուն քով:
Գրին 50 Սէնթ միայն:
Կարելի է ստանալ նաև Հայկական դեղատոմսէն — Ի թիւ 472 նոր Աճիւր, նիւ Եօրք:


Դ. ՊՈՂԻԿԵԱՆ ԵՒ Տ. ԲԻՐՓԵԼԵԱՆ
Առաջնակարգ Հայ Սպիրիտ
607 — Յրդ Աճիւր,
Սովորական գներ, մաքրութիւն և ուշադրութիւն:

ՀԱՅ ՀԱԿԱՆ ՃԱՇԱՐԱՆ
27 Նիւլենտ Փողոց, Պոսթըն,
(Երկտիւղեղ կայարանին մօտ)
Պոսթընի ամենէ աւելի յաճախորդ ունեցող ճաշարանն է այս: Գիններն չափաւոր են. կերակուրներն համեղ ու մաքուր: Պոստընի կ'ընդունուին համեստ շաբաթավճարով: Կահաւորուած սենեակներ: Ճաշարանի մէջ հաստատուած կայ նաև փուլ թէյպլ:

Յ. ԹԱԳԱԳՃԵԱՆ ԵՒ Պ. ԵԹԱՐԵԱՆ
ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱՇԱՐԱՆ
Թիւ 242 Իսթ, 41րդ Փողոց
Պատիւ ունին ծանուցանել թէ, այս նոր ճաշարանն բացած են սա վստահութեամբ միայն թէ մաքրութիւն և ընտիր խոհարարութիւն միշտ կը գնահատուի հասարակութեան կողմէ:
Միանգամ փորձեն բաւական է մը տընջենական յաճախորդ ըլլալու:

Պ Ա Կ Ա Ս Մ Ը Մ Ե Ր Մ Ե Ջ
Կենցաղ ապահովագրութեան ամենավստահելի Ընկերութիւն մը կը ներկայացնէ Աղեք. Թ. Տարազճեան: Պայմանք դիւրամատչելի են: Լիուի բացատրութիւնը հաճութեամբ կը տրուին փափաքողաց: Հասցէ՝
77 Ուէսթ 11րդ փողոց, Նիւ ԵՈՐԲ

Ա. Թ Օ Փ Ո Ւ Չ Ե Ա Ն
239 Իսթ, 26րդ Փողոց, Ն. Ե.
Կ Օ Շ Կ Ա Վ Ա Ճ Ա Ռ Բ ԵՒ Կ Օ Շ Կ Ա Վ Ա Ր



Ամառուայ ամեն տեսակ կօշիկներ (արանց, կանանց, տղայոց և աղջկանց) կը վաճառենք խիստ աժան գներով:
Արանց կօշիկներ § 1.25 5.00
Կանանց « 1.25 « 2.50
Տղայոց և Աղջկանց, 50 « 1.50
Նոր ապարուած կօշիկներ կը կարենք ձեւաւոր և վայելուչ կերպով, և կը նորոգենք ամեն կարգի կօշիկներ շատ աժան գներով:

Կ Օ Շ Կ Ա Վ Ա Ճ Ա Ռ
ՊՕՂՈՍ Մ. ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ
23 Կրին Փողոց, Ուսթըր Մաս


Ուրիշ տեղ մի՛ նայիր կօշիկի համար, մեր քով կը գտնես ճաշակիղ յարմար:
Պատիւ ունիմ յայտարարելու արդոյ Ազգայնոց որ Չասկուայ առթիւ ամեն կարգի կօշիկներ պատրաստած եմ, (արանց, կանանց, տղայոց և աղջկանց) համար:
98ր վերջին մօտային գեղեցիկագոյն կօշիկներ:
Նմանք երբէք չ'ըլտուած գներով:

Կ Օ Շ Կ Ա Վ Ա Ճ Ա Ռ
Ա Մ Է Ն Բ Ա Ր Ո Ւ Ն Ա Կ Ե Ա Ն
7 4 4 Յրդ. Ավըն. (39 և 40րդ. փող.)
Նոր առաջին կարգի կօշիկներ: Հիները ուշադրութեամբ կը նորոգենք: Հայերուն մասնաւոր գեղջ:


ՅԱԿՈԲ ԲԱՐԱԿԵԱՆ
Ամերիկեան և Արևելեան նպարավաճառ: Թիւ 45 Էքսքէնճ Սթ. Ուսթըր
Կը ծանուցանէ թէ գներու չափաւորութեան և նպարեղէններու ընտիր տեսակի մասին կը գերազանց ուրիշ նպարավաճառներն:
Սյնթապի հալուէ, լոխում, ձիթապուր և Տիգրանակերտի շարապի հարկեր:
Ն Պ Ա Ր Ա Վ Ա Ճ Ա Ռ
Յ. ՉԱՂՈՒՄ ԵՒ ՈՐԴԻԲ
Ն Ե Ր Ա Չ Ո Ղ Թ Բ Բ Ա Վ Ա Ն Ա Պ Ր Ա Ն Ա Յ

Պատիւ ունիմ ծանուցանել արդոյ Հայ հասարակութեան թէ վերոյիշեալ խանութի մէջ կը վաճառենք Շամու, Մըսըրի և Թուրքիոյ ամեն տեսակ ապրանքներ, զօրօրինակ՝ պուլըր, ծեծած, լոխում, հալվա, խահլէի տէյրման և ճէզվէ, ներկիլէ, թէյմպէքի, Հայոց ազգային հիւանդանոցի սիկարի թուղթ և ուրիշ շատ տեսակ նպարներ ու անուշեղէններ որ չենք կրնար բոլորն ալ յիշել հոս: Նաև ունինք ամեն տեսակ պահարեղէններ:
Խիստ աժան գներ: Փորձեցէք:
ՉԱՂՈՒՄ ԵՒ ՈՐԴԻԲ
73, Ուաշինկթօն Փողոց.

Ի Պ Ր Ա Ն Ի Մ Ա Պ Ա Ն Ա Ս Թ Ե Ա Ն
Հ Ա Յ Կ Ա Կ Ա Ն Ճ Ա Շ Ա Ր Ա Ն
Մեր այս նոր ճաշարանի մէջ պատրաստ կը գտնուին խիստ մաքուր կերակուրներ, խորտիկներ և անուշեղէններ:
Գինը չափաւոր, մաքրութիւնն նշանակելի: Մեր շէնքի մէջ ունինք նաև բաղանիք և վարձու կահաւորեալ սենեակներ:
407 Սթէֆէնսըն Սթ. Ուէսթ Հօպօքն



Գարնան համար մեր ստացած տեղական և Եւրոպական նոր ապրանքներն անկարելի է գնի մասին մըլցման ենթարկել ուրիշներու հետ: Մեր երկար փորձառութիւնն ու արհեստին մէջ ունեցած հմտութիւնն ապրանքներու տեսակին հետ միացած կ'երաշխաւորեն այնպիսի հագուստներ, որք չեն կրնար գերազանցուիլ: Փորձ մը բաւական է զբեղ համոզելու համար:
Հայ յաճախորդներէն եղած շահու հարկերին տասը պիտի յատկանայ Բարեգործական Ընկերութեան:
Ուրիշներու երթալէ առաջ շահու հարկ չ'ունիմ մեզ:
Կը ծախենք նաև առաջին կարգի Հեմլինքներ, չափաւոր գներով:



Յ. Մ. Ղ. ՈՒՄՐԻԿԵԱՆ
Թիւ 628 Յրդ. Ավըն. Նիւ ԵՈՐԲ



Հաստատեալ 1854
Յ Ա Կ Ո Բ Ի Ն Ե Բ Պ Ե Կ Ե Ա Ն
(Ներկայացուցիչ)
ՈՒՒԼԻՂՄ Պ. ԲԷՕՂԼԸՐ ԵՒ
Ե Ղ Բ Ա Ր Յ,
Վ Ա Ճ Ա Ռ Ա Վ Ա Ն Բ
Գրինի, Օղիի, ոգելից Ըմպլեյնայ և Էթի 202, 204 Իսթ 29րդ Փողոց, Նիւ ԵՈՐԲ, Ն. Ե.

Պատիւ ունիմ ծանուցանել արդոյ Հասարակութեան թէ իւր վաճառած ըմպլեյնքներն ոչ միայն փորձեալ և անխորտակ են, այլ և դիւրամատչելի են ամէն գասակարգի անձանց:
Այս վաճառատան մէջ կը ծախուին Եւրոպական, տեղական, Բալթիֆորնիայի և տաճկական ամէն տեսակ ուիքի, օղի, գինի, շամբանիա, մասթիլքայ, գարեջուր, պրանտի, ափսիխ և այլն, իրենց ամեն տեսակներով:
Փափաքողաց գներու ցուցակը շրջուի առանց ո'ւ է ծախքի:
Յանձնարարութիւնք կը կատարուին ամենայն ճշգրտութեամբ եւ փութով: Բաղաքին մէջ ապրանքներն ձրի կը դրուին, իսկ քաղաքէ դուրս շրջուածներուն ծախքը գնողներուն վրայ է:

Ըմպլեյնքներ կը վաճառուին թէ՛ մեծ և թէ՛ փոքր քանակութեամբ, իրենց յատուկ գներով: (Հօլմէյլ անտրիթիլ)
Մեր յաճախորդք երբ չի հաւնին իրենց գնած ըմպլեյնքներուն, յանձն կառնենք գոյնս իրենց, եթէ պակաս ու գնատուած չ'ըլլան:
Ըմպլեյնքներ կը վաճառուին շիշով, կալընով, տակառով և յատուկ սնտուկներով որք կը պարունակեն 12 կամ 24 շիշեր:
Դիմել յիշեալ հասցէին կամ
Յ. Մ. Ղ. ԵՒ Բ. Պ. ԵՒ Կ. Ե. Ա. Ն. Ե.
535 ՈՒՒԼԸՍԹ 57րդ Փողոց, Ն. Ե.